

վճարեն վանքին 60000 զրշ. պարտքը պատրիարք Արղար Դաւիթի ատեն. 1611ին կը հրաժարի և Կեսարիա կ'երթայ, բայց 1633ին դարձեալ կը հրաւիրուի Պոլսի Պատրիարքութեան. կը վախճանի 1636ին և կը թաղուի Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին բակը:

Գրիգոր Կեսարացիին եղբօրորդին Յակոբ երէց հետեւեալ կերպով կը նկարագրէ Կեսարացիին աշխատանքը Ս. Յակոբի պարտուց վճարման մասին. « . . եւ ի ՌԾԸ (=1609) թվին նաւեալ ի Բիւզանդիոյ յԵգիպտոս: Ելեալ ի լեւոն Սինա. ընդ իւր ունեւ լով զՄովսէս վրդն. (Սիւնեցին), տուեալ նմա գաւազան, որ եւ յետոյ եղև կաթողիկոս սուրբ Էջմիածին. և կատարեալ զուխտ իւրեանց յատուածախօս լեռնէն. դարձան անտի Ամիրթ. եւ աբարեալ ժողով բազում եպիսկոպոսոց եւ վարդապետաց սակս պարտուցն Երուսաղէմայ. նաեւ ենկի խօճոյն Ամթա և այլ բազում տօլվաթաւորաց վաճառականաց եւ ռամկոց, գրեցին տառաջնորդսն և առ տօլվաթաւորսն Վանայ, և ժողովեալ բազում տառաջնորդաց եւ տօլվաթաւորաց, եկեալ յԵրուսաղէմ ՌԾԹ (=1610) թվին, եւ էր պարտք սուրբ Երուսաղէմայ ԿՌ (60,000) զրշ. որ տառաջնորդ էր Դաւիթն արղար. սատարութեամբ հօգորին Աստուծոյ վճարեալ զպարտքն ազատեալ զըզգեստն, եւ եղեալ զԳրիգոր պարոնտէրն տառաջնորդ Ս. Երուսաղէմայ ի սոյն ամին, որոց վարձատրութիւնքն ի Գրիստոսէ լիցի ի ժամ դատաստանին ամէն. » (Հ. Աշոդներ ք. հատ. Էջ 205): Սոսյ Սիմէոն կթղն. ալ իր առ Փիլիպպոս կթղն. գրած թղթին մէջ ունի հետեւեալ տուրքերը այս մասին, « . . Ահա և ես ի ձեռագրին իւրում վկայէ հոգեւի հայրն. (Գրի. Կես.) երկցս երոնեալ բարունապետն եւ անյաղթ փիլիսոփայն և պայծառ ճանն եկեղեցւոյ այսպէս.

«Ես անտրժան Գրիգորս, պիտակ անուամբ կոչեցեալ վարդապետ և պատրիարզ. յորժամ ի Կոստանդնուպոլսոյ եկի ի Կեսարիա և հարկ եղև ինձ զնալ ի Բերիա, այսինքն Հալէպ. վասն Երուսաղէմայ նուիրակութեան, զոր յառաջագոյն կամօք և միաբանութեամբ Տէր Ազարիա կաթողիկոսին և վարդապետին Հայոց Տէր Ղուկասու և Տէր Սրապիոնի և Տէր Դաւիթ եպիսկոպոսին, որ յանձն արարին զձառաջութիւն նուիրակութեան Սուրբ Երուսաղէմայ, զոր կատարեցի իսկ զնոյն մատակարարութիւնն, եւ ի զնալն կամեցայ անցանել ընդ երկիրն Կիլիկեցւոց . . » (քակ.